

ՄԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՐՏԻՆԻՍՏԻ ՄԵՆԵ

Ի՞նչ պիտի Մէճմուսը Հաւատիս, բաղար, եօրթու վէ ճուս կիւնէրինստէն մատա պու գըթատա եւէփոյէ նէշը օլունաճադ տըր Սէնէլիյի բէշին օլարադ 200, Ալթը այլը 110, Եւշ այլը 60 զըշ. վէ թանէսի 1 զըշ. Տաշրալար իշին պէշէր նու մըրօսունա բօսթա իւճըթի ալընաճադը խաստէթէն պէյան օլունուր:



Իյանաթըն պէշէր օրրաճը պիւր տէֆալը 3, իբի տէֆա իշին 2, իւշ տէֆա իշին 1 1/2 զուրուշ, իւշ տէֆատան գիյատէ օլան, վէ զայէթ ուզուն իյանաթ իշին այլընա բաղարը օլունուր: Տաշրալարտան կէշէն մէթուպ վէ իյանաթըն բօսթա մէսարիֆէրի, կէժնտէրէնէրին իւզէրինէ օլունուր պէյան օլունուր:

ՈՒՄԱՐՈՒ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ, ՊԵԼԵՏԻՅԷ, ՎԷ ԻԼՄԻՅԷ

ՎԷ ՄԵՎԵՏԵ ՆԱԳԻՅԵ ՄԱՅԻՐԷՅԷ ՄԻՐԻՍԵԱԼԻԳ ՎԱՋԷՐԱՅ

ԱՆՈՒՄԻՐԻՍ 28 ՄԱՐՏ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ ԱՌ ԶԱՅՍ ՈՒՂԱՍՍ
ՇՐՋԱԿԵՐԱՎԱՆԻՆ ՊԱՍՏԱՅԻՆԸ
Մէճմուսըն 1133 ինճի նու մըրօսունա պաղը յէ:

ԺԶ.

Հոս վայր արքունեաց վերջին ըրած փոփոխութիւններուն վերայ Շըրշաբերականը այսպիսի մեկնութիւն մը կուտայ. իբր թէ վերջին գիւտերը որոնք երթեւեկութիւնները դիւրինացուցին, առիթ տուած ըլլան Պապին Արեւելեան եկեղեցեաց վերայ իւր միջամտութիւնը աւելցնելու. Այս մեկնութիւնս եթէ վատիկանին պաշտօնական վկայագրոց մէկուն մէջ հանդիպած չըլլայինք, գուցէ յետս կը կենայինք պապութեան դէմ զայն երգիծաբանութիւն մը համարելէն. Հեռագրոց և երկաթուղեաց անուր վարդապետութիւնը, և եկեղեցական կանոնները և կաթողիկոս բարեկարգութիւնը անոնց վերայ հաստատելը մէյ մէկ դառն նախադէպք են կաթողիկ եկեղեցւոյն համար, որ իւր առաքելական աւանդութեանց և քրիստոնէական վարդապետութեանց հաւատարմութեան վերայ պանծանալով կը յանդիմանէ միւս քրիստոնէայ գաւառութիւնները, որք ըստ պահանջման դարձու գանազան ժամանակներ զանազան փոփոխութիւններ ըրին հաւատոյ և բարեկարգութեան վերայ:

Արդեօք Ասորիքին և Միջագետքին մէջ երկաթուղեաց պահասութիւնն է՞ Պապին միւս Արեւելեան եկեղեցեաց ներքին վարչութեանց վերայ ըստ քմաց փոփոխութիւններ չընելուն պատճառը: Եթէ այս է, այն ժամանակ նոյն նախագաց ժողովուրդը, ներք. եթէ կուգին իրենց կրօնական և եկեղեցական իրաւունքները և արտօնութիւնները պահել, ըստ կարի պիտի դէմ գնեն իրենց գաւառներուն մէջ չինուելու երկաթուղեաց սկզբնաւորութեանը:

ԺԷ.

Շըրշաբերականը ուրիշ փաստ չը գտնաւոր իբրեւ վերջին յոյս արեւելեայ առ Պապս ըրած ապերախտութիւնը յառաջ կը բերէ, որ իւր կարծիքը հաստատելու համար երկաթուղեաց փաստէն աւելի զօրութիւն մը չունի:

ԺԸ. Յօդուածին մէջ ըսինք թէ կաթողիկոսները 1830 էն յառաջ տակաւին ինքնօրէն հասարակութիւն մը չէին կազմեր: Կաթողիկոսները պաշտօն

ական ներկայացուցիչ չունենալուն համար՝ յաճախակի կը պարտաւորէին օտար իշխանութեանց պաշտպանութեան գիւմէնը՝ իրենց գանգառները ի. Դրան ահանջը հա ցնելու համար Դար մը առաջ Ս. Աթոռոյն դուրսիւնը միջին դարու դուրսեանը աւելի կը մօտենար, և իւր չայնը Եւրոպական տէրութիւններէն աւելի դիւրութեամբ լսելի կըլլար: Արեւելքի կաթողիկոսները առանձին առիթներու մէջ Պապերուն կը գիւմէին. ասոր բոլոր պատճառն այն է որ Պապերը Եւրոպայի կառավարութեանց առջև անոնց համար միջնորդ ըլլան, որպէս զի իրենց ազդեցութիւնը ի նորոհս Կաթողիկոսաց ալ գործածեն:

Այս է պատմութեան վկայութիւնը՝ զոր չուզեցինք լուրսեմք անցնել. Կաթողիկոսները շատ անգամ Պապերուն և իշխանութեանց բարեյալօղ ազդեցութիւնը վայելցին. Բայց այսօրուան օրս իրաց դիւրք փոխուեցաւ. Կաթողիկոսները իրենց ներկայացուցիչը ստանալով՝ ալ չեն կարօտ միջնորդներու, որոնք ինչպիսի ալ սիրով կը պաշտպանէին Կաթողիկոսները, այնպիսի ալ իրենց միջամտութիւնը անոնց վրայ կ'աւելցնէին, և իրենց անիմահետեւութեամբ պատճառ կըլլային կարգէ դուրս պարտաւորութիւններ բեռնաւորելու Կաթողիկոսաց վրայ: Անանկոր չը կրնար մէկը որոշակի զանազանութեան որոնց կողմէն է աւելի մեծ անիմահետեւութիւնը, արդեօք Կաթողիկոսաց կողմէնէ՞ որոնք օտար տէրութեանց գիւմէնով առիթ կուտային այսպիսի կարգէ դուրս պարտաւորութեանց, թէ ոչ օտար տէրութեանց, որոնք Կաթողիկոսները պաշտպանելով՝ պատճառ կըլլային անոնց հալածանացը:

Պակայն բարեբաղդաբար ասոնց ամենը անցաւ. զորոնք շնորհիւ ի. Դրան ալ չը պիտի տեսնանք:

Իսկ Պապերուն ըրած բարեբարութեանց վրայ խօսելով՝ զորոնք Շըրշաբերականը իբր փաստյառաջ կը բերէ, Բենեատիկոս ժ. ին խօսքերովը կը պատասխանենք:

Իւր դեկտեմբեր 4ին 1740 ին գըրած Շըրշաբերականին վրայ խօսելով՝ կըսէ «Մենք յորդորած ենք բոլոր Պատրիարքները և եպիսկոպոսները որ եթէ պատահմամբ որ և իցէ գործոյ մը համար թէ հաւատոյ և տարածմանը համար Ս. Աթոռոյն օգնութեանը կարօտութիւն ունենան, երբեք չը տարակուսին մեզի դիմելու. վասն զի մենք խոստացած ենք ձեռու բերելէս եկած օգնութիւնը իրենց ընելու:»

Ահաւասիկ ի՞նչ կերպով Պապերը

իրենց օգնութիւնը խոստացած են, և մենք ի՞նչ կերպով զայն խնդրած ենք: Ի պահպանութիւն բարեկարգութեան խոստացուած օգնութիւնը՝ սկիզբէն ի վեր ի խանգարումն բարեկարգութեան փոխուած է, և երկուքին մէջ եղած կապը բոլորովին խզած. և եթէ Պապերը կը կարծեն թէ արեւելքիցները այլ ևս մի նոյն աչքով չեն նկատեր Պապութիւնը, պահասութիւնը ոչ թէ արեւելքիցներուն՝ այլ Պապերուն կողմէն է, որ իրենց խոստումները չկատարեցին:

Բայց ենթացքին թէ Պապերը արեւելեաց բարութիւնները ըրած ըլլան, միթէ այսու զանոնք գերի գընա՞ծ կ'ըլլան. երբեք բարեբարները բարեբարելոց վերայ տէրութեան իրաւունքը ստացած չեն. և եթէ մէկը միտքէն իսկ անցնէ որ անցեալին մէջ ըրած բարեբարութեան պատրուակաւ ուրիշին վերայ իշխելու իրաւունք կ'ունենայ, այնպիսին ամենանաւաստ ըզգածմանց տէր է. ուրեմն մինչ չըլլաբերականը այսպիսի զգածմանք մը կուտայ Պապերուն, ստուգելու զանոնք պաշտպանած չըլլան:

ԺԸ.

Եթէ ուզէինք Պապերուն Հայոց ըրած բարութիւնները քննել, պիտի պարտաւորէինք խիստ մանրամասն պարագաներու միջամտիւ ըլլալ. Բաւական ըլլայ մեզի անոնցմէ մէկը միայն յիշատակելը, այն է ի. Պօլսոյ նախագահական Կաթողիկոսութեանը. ոչ ապաքէն ասիկայ Պապերուն Հայոց ըրած ամենամեծ չարիքն է:

Կիլիկիոյ Կաթողիկոսէն անկախ և անմիջապէս Պապէն կախեալ Կաթողիկոսութեանը հաստատելով՝ հասարակութիւնը երկուքի բաժնեկիսն ոչ ապաքէն ամենաժգարող գործ մըն է: Մի և նոյն նախագահական Կաթողիկոսութեան մական եպիսկոպոսաց ընդդէմ ազգային իրաւանց հաստատութիւնը միթէ՞ կրնայ բարութիւն համարիլ. Հոս վայր արքունեաց 1846 ին բիւրաղգի խորամանկութեամբ և գաղտնի հնարիւք է. Պօլսոյ Կաթողիկոս յաջորդութիւնը որոշելով՝ միթէ՞ կրնայ բարութիւն կոչիլ: Բայց մէկ կողմ թողունք այս աղետալ յիշատակները, զորոնք չենք կրնար առանց ցաւի իշխել:

Պապերը չէին կրնար իրաւունք ըստանալ արեւելեան բարեկարգութիւնը փոխելու նոյն իսկ իրենց յառաջագոյն ըրած բարութիւններովը, բայց շըրշաբերականը այս իրաւունքը կուտայ Պապերուն, որ ոչ միայն անզօր է այլ և ոչ իսկ կայ. որովհետեւ այն որ չար հետեւութիւններովնեցած է՝ չը կրնար բարութիւն ըսուիլ:

ԺԹ.

Շըրշաբերականը մեղի իբր փաստ կառավարիկ թէ արեւելեան եպիսկոպոսները Պապին օգնութիւնը խնդրելու համար ասոր գիւմէնին, և ասոր համար փոքր ի շատէ քաղաքական բացատրութիւններ գործածեցին, զոր բոլորովին չանարգելու համար հետեւեալ խորհրդածութիւնս կը յաւելումք: Արեւելեայք ոչ երբեք ժխտեցին Հոս վայր Կաթողիկոսութեան եկեղեցւոյ առաջին Կաթողիկոս ըլլալը, և որ և իցէ վրձնոյ մը ընդհանրութեանը համար բոլոր եկեղեցւոյ համաձայնութեան անհրաժեշտ հարկաւորութիւնը. Արեւելեան եկեղեցին իրեն վճիռներուն աւելի զօրաւոր ըլլալուն համար կրնար իրաւամբ Արեւմտեան եկեղեցւոյն հաստատութիւնը և հաւանութիւնը խնդրել:

Բայց այսու չենք ըսեր թէ Արեւելեան եկեղեցւոյն վճիռները առանց Հոս վայր հաւանութեան զօրութիւն մը չունին:

Ս. Փլափիանոս Պատրիարքը Կ. Պօլսոյ ժողովքին Եւտիքեսիոյ դէմ հանած վճիռն հաստատութիւնը Լեւոն մեծէն խնդրած ժամանակ բարեբաղդաբար նախազգացեալ իւր նամակին մէջ այսպէս կը գրէր թէ Պապը «Արեւելքին գործը իբրեւ իւրը սեպէ. և կ'սէր թէ ժողովքին որոշողութիւնները արդէն կանոնապէս հրատարակեալ վճիռներ են», և անկէ միայն իւր հաւանութիւնը կը խնդրէր:

Փլափիանոսին զուցածը արդեօք կը ցուցնեն թէ Արեւելքի եկեղեցւոյն վճիռները, եթէ Պապը գանոնք չը հաստատէ, ամենէին ոյժ չունին: Փլափիանոս ինքն կուտայ իւր խնդրածին պատճառը, և կըսէ թէ «Կայրը և ոչ թէ հաւատացեալները յորդորելու համար է. կը հակառակի նաև Լեւոն մեծին նորէն ժողովք գուժարելու առաջարկութեանը ըսելով՝ թէ անօգուտ և անհարկաւոր է:

Այս տողերս կը նուիրենք անոնց որոնք Փլափիանոսին նամակին և Շըրշաբերականին բերած վկայութեանց իմաստ չիմանալով՝ գուցէ անոր մէջ պարունակեալ բացատրութեանց բացարձակ իմաստ մը կընծայեն:

(Շարունակելի)

ՄԻՒԹԵՆԷՎԻՅԷ

Իշխէն ճուսա երթէսի կիւնիւրիւթպէթլու Բիւրէլիեան բաթրիգ է. Ֆէնտի հազրէթլէրի իլէ, Ֆազիլէթլու Գազանճեան Սուքիա գեղարայածաւ վէ Էնֆիլէճեան վարդապետ րիֆա գաթի իլէ, Տէպլէլի Լիպիան միւթէսաւը Բիւթլէմ բաշա հազրէթլէրինէ

